# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Մարտի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սլովակիայի արտակարգ և լիազոր դեսպան Աուգուստին Չիսարին:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց Սլովակիայի նորանշանակ դեսպանին և արդյունաշատ ծառայություն ցանկացավ իր նոր պաշտոնում: Նորին Սրբությունը ուրախություն հայտնեց, որ Հայաստանի և Սլովակիայի միջև հարաբերությունները նոր զարգացում և վերելք են ապրում՝ նշելով նաև, որ Սլովակիայի հայ համայնքը նույնպես կարևոր դերակատարություն է իրականացնում երկու պետությունների ու ժողովուրդների կապերի սերտացման ու ամրապնդման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Սլովակիայի իշխանություններին ու ժողովրդին՝ անցած տարվա նոյեմբերին Սլովակիայի Խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Իր հերթին դեսպանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, հավաստիացրեց, որ հնարավոր կարելին է անելու՝երկու ժողովուրդների բարեկամության առավել ամրապնդման համար: Որպես պատմաբան նա նշեց նաև, որ մեծ է Հայ Եկեղեցու բերած նպաստը ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթին:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը պրն Չիսարին ներկայացրեց Հայոց Եկեղեցու ունեցած պատմական առաքելությունը, ներկայիս գործունեությունն ու մարտահրավերները: Խոսվեց նաև երկու երկրներում փիրող կրոնական իրավիճակի մասին:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ 500 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ

Մարտի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի և Արցախի տարբեր շրջաններից՝ մի շարք բնագավառներում որոշակի հաջողություններ արձանագրած շուրջ 500 երիտասարդների: Հանդիպումը կազմակերպվել էր ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության նախաձեռնությամբ:

Հանդիպման սկզբում երիտասարդների անունից Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց և ընդունելության համար շնորհակալություն հայտնեց ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Լիլիթ Ասատրյանը. «Նպատակը մեկն է՝ հերթական ան-

զամ ամրապնդել կապը և մեկ անգամ ևս հաղորդակից դառնալ հոգևոր արժեքներին և հնարավորություն ունենալ հանդիպել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, քննարկել երիտասարդությանը հուզող հարցեր».- նշեց փոխնախարարն իր խոսքում՝ կարևորելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը երիտասարդության կյանքում, հանուն երիտասարդության պատրաստակամություն հայտնելով գործուն մասնակցություն բերել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կրթական, սոցիալական, մշակութային ծրագրերին:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր գնահատանքը հայտնելով ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարին և նախարարության անձնակազմին՝ գեղեցիկ այս նախաձեռնության համար, գոհունակություն հայտնեց ներկաների հանձնառու ոգու և պատրաստակամության համար և գոհաբանական աղոթքով ու օրհնությամբ իր բարեմաղթանքներն ուղղեց համախումբ երիտասարդությանը: «Այս այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին խրախույսի, ոգևորության և ներշնչանքի մի նոր առիթ պիտի լինի ինչպես ձեր ամենքի, այնպես և մեզ համար»,- մասնավորաբար ասաց Նորին Սրբությունը՝ իր գնահատանքը հայտնելով արդեն երիտասարդ փարիքում ակնառու հաջողություններ արձանագրած երիտասարդներին:

«Ձեզանով է, որ հզոր է և պիտի շարունակ հզորանա Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Հայրենիքն ու հայոց կյանքը: ...Լինենք միասնական, մեկ ամբողջություն և միայն այդ պարագային կլինենք հզոր ու անպարտելի»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում՝ հորդորելով երիտասարդներին ապրել «Կյանք իմացյալ՝ անմահություն է» կարգախոսով առաջնորդված կյանքով, ազգային շահերի հստակ գիտակցությամբ և իրականացնել կյանքում մեր առջև դրված այն խնդիրները, որոնցով պիտի երաշխավորված լինի հայ ժողովրդի ապագայի ընթացքը:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Եկեղեցու և ազգի առջև ծառացած մարտահրավերներին: Հանդիպման ընթացքում երիտասարդները հարցումներ ուղղեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Եկեղեցու գործունեության, Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև փոխհարաբերությունների, Հայոց Մեծ եղեռնի 90-ամյա փարելիցի և Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջոցառումների, ինչպես նաև ազգային և եկեղեցական կյանքում առկա խնդիրների մասին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահ Վլադիմիր Կոնոպլյովին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ԱԺ Սոցիալական, առողջապահության և Բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ և բելառուս ժողովուրդների օրեցօր ամրապնդվող բարեկամության, ինչպես նաև երկու պետություննե-րի միջև ձևավորված արդյունավետ համագործակցության համար՝ մաղթելով, որ նման փոխայցելություններով առավել ամրապնդվեն երկու պետությունների և ժողովուրդների միջև առկա ջերմ և սերտ հարաբերությունները: Վեհափառ Հայրապետն իր շնորհակալու-թյունն ու գնահատանքը հայտնեց նաև Բելառուսի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ ունեցած հոգածու վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև երկու երկրներում առկա կրոնական իրավիճակին, կրթական, քրիստոնեական դաստիարակության և սոցիալական ոլորտնե-րում երկու Եկեղեցիների գործունեությանը, ինչպես նաև Եկեղեցի-պետություն հարաբերու-թյուններին:

Նորին Սրբությունն իր ողջույններն ու բարեմաղթանքները հղեց Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ Ֆիլարետին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*